ցած ուժերով Անիի հնութիւնների ցուցահանդէս, օգտուելով այն հանգամանքից, որ Լենինգրադումն են Անիի պեղումների նախաձեռնողն ու ղեկավարը ակադեմիկ Ն. Մառը եւ Պրոֆ. Հ. Օրբելին։ Այդ նպատակով Երեւանից տեղափոխուած է Պետ. Թանգարանի ունեցած Անիի հնութիւնների ամբողջ ժողովածուն։ Իբր լրացուցիչ ուղարկուել են նաեւ ճարտարապետ Ն. Բունիաթեանի Անիում կատարած գծագրումները։ Բունիաթեանի պահպանած գծագրումներն ստանում են կրկնակի կարեւորութիւն այն պատճառով, որ Անիի լուսանկարների նեղտալիների, գծագրումների, պեղման օրագիրների եւ այլ նիւթերի ժողովածուն, մի ամբողջ վագոն, որ քաղաքացիական կոլների սկզբին ուղարկուել է Լենինգրադ, ճամբին անյայտացել է։

Վերոյիշեալ նիւթերին պէտք է աւելանան Երմիտաժում գտնուած խեցիները եւ որմանկարները։ Ցուցահանդէսից յետոյ ամբողջացած ժողովածուն պիտի ուղարկի Երեւան՝ Պետ. Թանգարանում ճշտապէս պահելու համար։ Ցուցահանդէսը բացւում է այս ամսի կէսերին եւ կը տեւի երկու ամիս։

Գեղաշխի կերպարուեստի սկզբիայի ցուցահանդէսը. — Երեւանում պետ. թատրոնի շէնքում բացուեց Գեղաշխի կերպարուեստի սկզբիայի ցուցահանդէսը, որին մասնակցում են Հայաստանի Յեղափոխութեան Արուեստագէտների Միութիւնը, երիտ. սէկցիան, Հայաստանի կերպարուեստագէտների ընկերութիւնը, գեղարտեխնիկումի արտադրական բաժինը եւ անհատ արուեստագէտներ։

Հինգ դահլիճներում տեղաւորուած են նմուշներ գեղանկարչութիւնից, քանդակագործութիւնից, գրաֆիկայից, ճարտարապ. պրոէկտներից, փայտաճշակման ու մետաղամշակման նմուշներից։

Վ. Սարեանի «Զրահագնացքը». — Երեւանի Պետհրատը լոյս ընծայեց Վ. Սարեանի «Զրահագնացքը», որի նիւթը, վերցուած Խորհ. Հայաստանի կեանքից, ունի բաւական յաջող նկարագրութիւններ, տիպեր եւ պատկերներ։

Երաժշտական հրատարակչութիւն. — Թիֆլիսի Լուսրաժնին կից կազմակերպուած է երաժշտական հրատարակչութիւն։ Ընտրուած է մի յատուկ խմբագրական կոլլեգիա, որի կազմի մէջ մտնում են. երաժիշտներ Երմէն Տիգրանեան, Մարտիրոս Մազմանեան, Արշալոյս Այվազեան եւ Ումբ. Հատ։ Կոլլեգիան մօտ օրերս հրատարակելու է մի շարք մանկական երգեր, որի համար իր տրամադրութեան տակ ունի որոշ գումար։

«*Լիրիկա*». — Վրաստանի Պրոլէտ Գրողների Ասոցիացիայի հայկական սէկցիայի հրատարակութեամբ լոյս տեսաւ երիտասարդ շնորհալի պրոլէտ բանաստեղծ Ռուբէն Ղազարեի «Լիրիկա» բանաստեղծութիւնների գրքոյկը։

Կոյր երաժշտագէտ Խաչիկ Խաչիկեանի համերգը. — Հայ երիտասարդ կոմպոզիտորների ընդգաւառում աւելանում է մի նոր համեստ ուժ եւս. դա կոյր երաժիշտ Խաչիկ Խաչիկեանն է, որի համերգը կայացաւ Յունիս 5ին Թիֆլիսի պետական կոնսերվատորիայի դահլիճում։ Մրագիրը կազմուած էր վերջին տարուայ նրա ստեղծագործութիւններից։ Նրա «Արեւելեան նոկտիւրնը», «Սգոյ Պրելիւդը» եւ այլ աշխատութիւններն ապացոյց են նրա խոշոր ընդունակութեան։

ԹՂԹԱԿԻՑ

ՎՐԻՊԱԿ

Անահիտ, *թիւ* 6, Կամքը *ուսումնասիրութեան մէջ՝ էջ* 24, 4*րդ տող (վարէն) Ա. սիւնակ*, Եպիկոս, *ուղղել* Եպիկուր. *էջ* 26, *տող* 18, *Բ. սիւնակ*, Արդեն, *ուղղել* Արդի. *էջ* 27, *Բ. սիւնակ, ծանօթագրութեան մէջ*, Le Sivaut, *ուղղել* Le Savant. *էջ* 29, *Բ. սիւնակ, տող* 14, կամքն իսկ, *ուղղել* կեանքն իսկ. *էջ* 32, *Բ. սիւնակ, տող* 18, ծանօթութիւն. Վէճի նիւթի շուրջ, իսկ... *ուղղել* ծանօթութիւն՝ Վէճի նիւթի շուրջ։ Իսկ...

Ե. Մանուէլեանի նուիրուած յօդուածին մէջ, էջ 4, *Ա. սիւնակ*, 1827*ին, ուղղել* 1927*ին։*

Ա. Սագրգեանի յօդուածին մէջ, պատկերները թուագրուած են 1, 2, 3, *ուղղել՝* 3, 4, 5, *եւայլն։*

LE GÉRANT : ATOG GUÉVREK

IMPRIMERIE TURABIAN

227. BOULEVARD RASPAIL

PARIS

Fonds A.R.A.M